ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի մարտի 1-ից մինչև ապրիլի 7-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

- Իրականացվել են քաղաքացիների դիմումների և բողոքների ընդունման, ուսումնասիրման և համապատասխան արձագանքման աշխատանքներ. տրամադրվել են խորհրդատվություններ և պարզաբանումներ՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, սոցիալական երաշխիքների և պետական աջակցության ծրագրերի հետ:
- Բաժնի ղեկավարի հանձնարարությամբ մշակվել և շրջանառության մեջ են դրվել պաշտոնական գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, ինչպես նաև ներկայացվել են մասնագիտական առաջարկություններ և եզրակացություններ՝ բաժնի գործառույթների շրջանակում:
- Ուսումնասիրվել և վերլուծվել են սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ծառայությունների որակին և համապատասխանությանը սահմանված չափորոշիչներին:

- Մասնակցություն եմ ունեցել ոլորտային ծրագրերի իրականացման մշտադիտարկման և գնահատման աշխատանքներին՝ նպաստելով ծառայությունների արդյունավետության բարձրացմանը և շահառուների կարիքներին համապատասխանեցմանը:
- Իրականացվել են տվյալների հավաքագրման, ամփոփման և վերլուծության աշխատանքներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական կարիքների բացահայտման և ծրագրային բարելավումների նպատակով:
- Շարունակվել է համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների հետ. մասնակցություն եմ ունեցել աշխատանքային հանդիպումների և քննարկումների՝ ուղղված ոլորտի զարգացմանը և նոր նախաձեռնությունների ձևավորմանը:
- Ներգրավված եմ եղել ապաինստուցիոնալացման գործընթացներին առնչվող աշխատանքներում՝ մասնավորապես համայնքային ծառայությունների զարգացման ծրագրերի շրջանակում իրականացվող միջոցառումներին: Այդ համատեքստում շարունակվել են աշխատանքները ՀՀ Արմավիրի մարզում անկախ կյանքի կենտրոնի ստեղծման ուղղությամբ:
- Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Աստղավարդ» ՀԿ, «Աուտիզմ ազգային հիմնադրամ» «Երջանկության ճանապարհ» ԲՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Փրկություն» ԲՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

- Մասնակցություն եմ ունեցել ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրությանը և դրանց վերաբերյալ մասնագիտական առաջարկությունների ներկայացմանը:
- Ներգրավված եմ եղել տեղեկատվական և իրազեկման աշխատանքներում՝ նպաստելով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը:

07.04.2026թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան